



**<<ՋՈՒՐ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ>> ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ:  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ՝ ՋՐԻ ԿԱՅՈՒՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԱՆՎՏԱՆԳ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՊԱՏՇԱՃ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ**

**Նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների  
իրականացման աջակցության գործողությունների ծրագիր**

**Երևան, հունիս 2014թ.**

Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում ջրի և առողջության մասին արձանագրության իրականացման վերաբերյալ ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորել է Ֆինլանդիայի կառավարությունն իր FinWaterWei ծրագրի միջոցով: ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ), որպես հիմնական իրականացնող կազմակերպություն, օժանդակել է Հայաստանի Հանրապետությանը ծրագրի իրականացման գործում: <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ -ն համաձայնեցրել է ՀԿ-ների օժանդակությունը և ցուցաբերել կազմակերպչական աջակցություն:

Սույն հրապարակումը պատրաստել է Վահագն Տոնոյանը (Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ), որը հանդես է գալիս որպես առաջատար հեղինակ՝ հիմնվելով ազգային աշխատանքային խմբի պատրաստած և ծրագրի Ղեկավար հանձնախմբի կողմից հաստատված տեխնիկական հաշվետվությունների վրա և ստանալով հետյալ անձանց օժանդակությունը՝

Ալիշեր Մամաջանով (ՄԱԿ-ի ԵՏՀ, <<Ջուր և առողջություն>> արձանագրության քարտուղարություն)  
Մեթյու Կահեյն (ՄԱԿ-ի ԵՏՀ առաջատար խորհրդատու)  
Վոլոդյա Նարիմանյան (բնապահպանության նախարարություն, Հայաստան), ծրագրի համակարգող  
Նունե Բակունց (առողջապահության նախարարություն, Հայաստան), ծրագրի համակարգող

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ՆԱԽՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՋՈՒՐ և ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ.....	6
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ.....	13
4. ԴՈՆՈՐՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ.....	32
5. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ.....	35
6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	433
ՀՂՈՒՄՆԵՐ.....	444

## Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՀԽ	Ավազանային հասարակական խորհուրդ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՔԵ	Ազգային քաղաքականության երկխոսություն
ԲՊՆ	Բնապահպանության նախարարություն
ԲՏՓՀ	Բնապահպանական տեղեկատվության փոխանակման համակարգ
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՀՔԳ	Եվրոպական հարևանության քաղաքականության գործիք
ԵՄ	Եվրոմիություն
ԵՄԶՆ	Եվրոպական Միության ջրային նախաձեռնություն
ԶԳԲ	Զարգացման գերմանական բանկ
ԶՖԳ	Զարգացման ֆրանսիական գործակալություն
ԷԲՌՆ	Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄՀ	Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամ
ՃՄՀԳ	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՄԱԿ ՇՄԾ	Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագիր
ՆԱՍՕ	Հյուսիս-ատլանտյան պայմանագրի կազմակերպություն
ԶԱԾ	Զրի ազգային ծրագիր
ԶԱԾ	Զրի անվտանգության ծրագիր
ԶԹ	Զրոգտագործման թույլտվություն
ԶԿՄ	Զրավազանային կառավարման մարմին
ԶԿՊ	Զրավազանային կառավարման պլան
ԶՄԸ	Զրամատակարարման ընկերություն
ԶՇԴ	Զրի շրջանակային դիրեկտիվ
ԶՌԿԳ	Զրային ռեսուրսների կառավարման գործակալություն
ԶՌՀԿ	Զրային ռեսուրսների համապարփակ կառավարում
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏԲԿ	Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
ՏԿՆ	Տարածքային կառավարման նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

## 1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. ընդունված ՄԱԿ-ի ԵՏՀ <<Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային>> (Ջրային կոնվենցիա) կից <<Ջուր և առողջություն>> արձանագրությունը ստորագրել է 1999թ. հունիսի 17-ին, Լոնդոնում: Այդ ժամանակվանից սկսվել է արձանագրության վավերացման գործընթացը:

Արձանագրության 6-րդ հոդվածի պահանջների համաձայն նպատակային ցուցանիշների և դրանց կատարման ժամկետների սահմանման գործընթացը դյուրացնելու և Հայաստանում արձանագրության իրականացմանն օժանդակելու նպատակով, ՄԱԿ-ի ԵՏՀ-ն նախաձեռնել է աջակցության ծրագիր՝ սերտորեն համագործակցելով ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների հետ և ստանալով Ֆինլանդիայի ֆինանսական աջակցությունը FinWaterWEI<sup>1</sup> ծրագրի միջոցով:

Ծրագրի հիմնական նպատակներից մեկը Հայաստանի Հանրապետության կողմից «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացմանը նպաստելն էր՝ արձանագրության հարցերի շուրջ քաղաքականության երկխոսության և որոշումների կայացման համար ֆորումի ապահովման և ճանապարհային քարտեզի մշակման միջոցով:

Որպես ծրագրի իրականացման մաս, , ազգային փորձագետներից և միջազգային խորհրդատուից բաղկացած աշխատանքային խումբն ավարտել է ելակետային իրավիճակի վերլուծությունը և վերջնականացրել է արձանագրության շրջանակում նախնական համաձայնեցված նպատակների և նպատակային ժամկետների սահմանման աշխատանքը, որոնք ընդունվել են ծրագրի ղեկավար հանձնախմբի կողմից 2014թ. մայիսին: Ներկայիս զեկույցը հիմնված է այդ արդյունքների վրա և ներառում է նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների իրականացման աջակցության գործողությունների ծրագիր՝ ընդհանուր նպատակ ունենալով ապահովել Հայաստանում ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի և պատշաճ ջրահեռացման մատչելիություն:

Հիմնվելով նախնական համաձայնեցված նպատակների և ՀՀ «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի փուլային միջոցառումների ծրագրի վերլուծության վրա՝ սույն զեկույցը սահմանում է առաջնահերթությունները և ներառում միջոցառումներ «Ջուր և առողջություն» արձանագրության դրույթների իրականացման համար՝ միննույն ժամանակ պահպանելով համապատասխան ազգային ընթացակարգերը ջրային ռեսուրսների կառավարման, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում միջոցառումների պլանավորման, իրականացման և ֆինանսավորման համար:

<sup>1</sup> FinWaterWei-ը Ֆինլանդիայի ջրային հատվածի՝ Ընդլայնվող Եվրոպայի նախաձեռնության ներքո ԱԵԿԿԱ երկրներին աջակցության ծրագիրն է: FinWaterWEI ծրագիրը ղեկավարվում է Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության անունից՝ Ֆինլանդիայի շրջակա միջավայրի ինստիտուտի (SYKE) կողմից (<http://www.environment.fi/default.asp?contentid=405313&lan=EN>)

Զեկույցում նաև տրվում է նպատակների իրականացման համար ծախսերի վերաբերյալ խիստ մոտավոր հաշվարկ և սահմանվում են ֆինանսավորման հնարավոր աղբյուրները՝ հաշվի առնելով Հայաստանում միջազգային բազմակողմ և երկկողմ դոնորների ֆինանսավորմամբ և աջակցությամբ իրականացվող ջրի հետ կապված ծրագրերի ու նախաձեռնությունների նպատակը և գործունեության շրջանակը: Առաջարկվող յուրաքանչյուր միջոցառման համար նշված է դրա իրականացման համար պատասխանատու կազմակերպությունը:

## 2. Նախնական սահմանված նպատակներն ըստ Հայաստանում «Ջուր և առողջության» արձանագրության

Ստորև ներկայացվում են Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության ներքո նախնական սահմանված նպատակները: «Ջուր և առողջություն» արձանագրության 20 թիրախային ոլորտներից 9 թիրախային ոլորտները Եվրամիության ջրային նախաձեռնության ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի (որը հանդես է գալիս որպես ծրագրի ղեկավար հանձնախումբ) կողմից ընդունվել են որպես Հայաստանի համար առաջնային ոլորտներ, ուստի, ՄԱԿ ԵՏՀ/FinWaterWei ծրագրի փորձագետները, խորհրդակցելով ազգային շահագրգիռ կողմերի և շահառուների հետ, մշակել են համապատասխան նպատակներ այդ առաջնային ոլորտների համար:

Որպես առաջնային ընտրվել են հետևյալ ոլորտները՝

- թիրախային ոլորտ I - մատակարարվող խմելու ջրի որակ,
- թիրախային ոլորտ II - ջրի հետ կապված բռնկումների և հիվանդությունների կրճատում,
- թիրախային ոլորտ III - խմելու ջրի մատչելիություն,
- թիրախային ոլորտ IV - ջրահեռացման մատչելիություն,
- թիրախային ոլորտ XI - կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակ,
- թիրախային ոլորտ XIV - խմելու ջրաղբյուր հանդիսացող ջրերի որակ,
- թիրախային ոլորտ XVIII - հատկապես աղտոված տարածքների հայտնաբերում և մաքրում,
- թիրախային ոլորտ XIX - ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետություն,
- թիրախային ոլորտ XX - մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականություն:

Առաջնային թիրախային ոլորտներին համապատասխան՝ ՄԱԿ ԵՏՀ/FinWaterWei ծրագրի թիմը նախնական մշակել է ստորև ներկայացվող նպատակները, նպատակներին հասնելու ժամկետներն իրենց համապատասխան ցուցանիշներով, համապատասխան միջոցառումները, ինչպես նաև առաջարկվող պատասխանատու կազմակերպությունները: Դրանք մանրամասն քննարկվել են Հայաստանում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հարցերով ԵՄՋՆ ԱՔԵ ղեկավար հանձնախմբի 2014թ. մայիսի 6-ին կայացած 12-րդ հանդիպման ժամանակ և ճշգրտվել են՝ բոլոր հանձնարարականներում և առաջարկություններում ներառելու նպատակով:

**Աղյուսակ 1 - Նախնական համաձայնեցված թիրախները և թիրախներին հասնելու ժամկետները Հայաստանում**

<b>Թիրախային ոլորտ I - մատակարարվող խմելու ջրի որակը</b>			
<b>#</b>	<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ<sup>2</sup></b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>
1.1	Խմելու ջրի որակի քիմիական ցուցանիշների համապատասխանություն ազգային ստանդարտներին (F, NO <sub>2</sub> , NO <sub>3</sub> , As, Fe, Pb)	առնվազն 99%՝ սկսած 2014թ.-ից	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
1.2	Խմելու ջրի որակի միկրոկենսաբանական ցուցանիշների՝ ազգային ստանդարտներին անհամապատասխանության կրճատում	մինչև 2016թ.՝ ոչ ավել քան մինչև 18%, մինչև 2020թ.՝ ոչ ավել քան մինչև 15%	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
1.3	Ջրի անվտանգության ծրագրերի (ՋԱԾ) մշակում և իրականացում	5 համայնքում՝ մինչև 2020թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
<b>Համապատասխան միջոցառում</b>			
1	«Ջրի անվտանգություն» ծրագրի մեթոդաբանության և համապատասխան իրավական դաշտի մշակում՝ էլնելով ԱՀԿ մոտեցումներից	մինչև 2016թ.	ՀՀ առողջապահության նախարարություն

<b>Թիրախային ոլորտ II - ջրի հետ կապված բռնկումների և հիվանդությունների կրճատում</b>			
<b>#</b>	<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>
2.1	Խոլերայի, որովայնային տիֆի և վիրուսային հեպատիտ Ա-ի՝ ջրով պայմանավորված դեպքերի, բռնկումների և համաճարակների բացակայության պահպանում	շարունական	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
2.2	Ռոտավիրուսային վարակի դեմ երեխաների պատվաստումների ընդգրկվածության մակարդակի պահպանում	տարեկան առնվազն 90% ընդգրկվածություն	ՀՀ առողջապահության նախարարություն
<b>Համապատասխան միջոցառում</b>			
1	Ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների դեպքերի կամ բռնկումների վերահսկման և արձագանքման համակարգի հզորացում՝ 29.12.2011թ. թիվ 1913-Ն կառավարության որոշման համաձայն		ՀՀ առողջապահության նախարարություն

<b>Թիրախային ոլորտ III - խմելու ջրի մատչելիությունը</b>			
<b>#</b>	<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>
3.1	Գյուղական համայնքների անվտանգ խմելու ջրի մատչելիության բարելավում՝ ջրամատակարար-	մինչև 2015թ.՝ 15 համայնքում, մինչև 2020թ.՝ ևս 20	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ

<sup>2</sup> Մինչև նշված համապատասխան տարիների ավարտը:

	ման համակարգերի կառուցմամբ և վերակառուցմամբ	համայնքում	
3.2	Ջրամատակարար կազմակերպությունների ծառայությունների մատուցման բարելավում	ջրամատակարարման համակարգերում ջրի կորստի մակարդակի նվազեցում՝ համեմատած 2013թ.-ի հետ. - 5 %՝ մինչև 2016թ. - 7 %՝ մինչև 2017թ., - 10 %՝ մինչև 2020թ.  24-ժամյա ջրամատակարարման ապահովում քաղաքային բնակչության 90%-ի համար՝ մինչև 2020թ., քաղաքային բնակչության 95%-ի համար՝ մինչև 2025թ.	ՀՀ քարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
3.3	Հանրակրթական հաստատություններում ջրամատակարարման բարելավում (հաստատությունները ներառում են մանկապարտեզները, ավագ դպրոցները և գիշերօթիկ դպրոցները)	20 հաստատությունում՝ մինչև 2016թ., ևս 30 հաստատությունում՝ մինչև 2020թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն
3.4	«Ջրամատակարարման մասին» օրենքի ընդունում	մինչև 2016թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ Ազգային ժողով
<b>Համապատասխան միջոցառումներ</b>			
1	Խմելու ջրի մատակարարման ծառայություն մատուցող ընկերությունների կողմից չապասարկվող 560 գյուղական համայնքի ջրամատակարարման իրավիճակի գնահատում	մինչև 2015թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
2	Խմելու ջրի մաքրման 5 կայանի վերականգնում	մինչև 2018թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
3	Մակերևութային ջրերից անմիջապես օգտվող 5 բնակավայրում մաքրման կայանների կառուցում	մինչև 2020թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
4	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների ջրամատակարարման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	մինչև 2020թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն

<b>Թիրախային ոլորտ IV - ջրահեռացման մատչելիությունը</b>			
	<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>
4.1	Ջրահեռացման մատչելիության բարելավում	ա) նոր ջրահեռացման համակարգերի կառուցում, ներառյալ կեղտաջրերի հեռացման և	Տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ



		<p>մաքրման այլընտրանքային համակարգերը մինչև 2018թ.՝ 10 բնակավայրում,</p> <p>մինչև 2025թ.՝ լրացուցիչ 40 բնակավայրում</p> <p>բ) կենտրոնացված ջրահեռացման համակարգերի վերականգնում և ընդլայնում՝ մինչև 2016թ. առնվազն երկու քաղաքում, մինչև 2020թ.՝ ևս երեք քաղաքում</p>	
4.2	Հանրակրթական ու նախադպրոցական հաստատություններում ջրահեռացման մատչելիության բարելավելում	Ջրահեռացման նոր համակարգերի, ներառյալ էկոլոգիական գույքարանների՝ կառուցում մինչև 2018թ.՝ 10 բնակավայրում, մինչև 2025թ.՝ ևս 25 բնակավայրում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն
<b>Համապատասխան միջոցառումներ</b>			
1	Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերակառուցում և արդիականացում	մինչև 2016թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Երևանի քաղաքապետարան
2	Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում և ջրահեռացման ցանցերի բարելավում	մինչև 2016թ.՝ Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում, մինչև 2020թ. ևս երեք քաղաքում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
3	Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ապահովման ազգային ռազմավարության մշակում և հաստատում	մինչև 2015թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
4	Ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող 560 գյուղական համայնքների ջրահեռացման իրավիճակի գնահատում	մինչև 2015թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
5	Հանրակրթական ու նախադպրոցական հաստատությունների ջրահեռացման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում ու իրականացում	մինչև 2020թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն

<b>Թիրախային ոլորտ XI - կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակը</b>			
#	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
11.1	Մաքրման կայաններից բաց ջրավազաններ արտահոսող ջրերի որակի նորմերի և հեռացման կարգի մշակում և սահմանում	մինչև 2016թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն
11.2	Չմաքրված կեղտաջրերի արտա-	առնվազն 50%-ով՝ մինչև	ՀՀ տարածքային կառավարման

	հոսքի կրճատում Երևան քաղաքում	2017թ., 75 %-ով՝ մինչև 2020թ. (2014թ.-ի համեմատ)	նախարարություն, Երևանի քաղաքապետարան
11.3	Զմաքրված կեղտաջրերի արտահոսքի կրճատում ևս 4 քաղաքում	կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում՝ մինչև 2016թ., առնվազն ևս 2 քաղաքում կեղտաջրերի մաքրման կայանների վերանորոգում/ կառուցում՝ մինչև 2020թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
<b>Համապատասխան միջոցառումներ</b>			
1	Ջրամատակարար կազմակերպությունների աշխատանքների գնահատման չափորոշիչներում կեղտաջրերի մաքրման ցուցանիշների ներառում	մինչև 2016թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
2	Իրականացնել ջրի որակի գնահատում՝ ըստ բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի ԹՄԱ չափանիշների	մինչև 2018թ. պիլոտային ծրագրի իրականացում առնվազն մեկ ջրավազանի համար, մինչև 2020թ.՝ ևս 2 ջրավազանի համար	ՀՀ բնապահպանության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն
3	Արտանետվող կեղտաջրերի որակի մոնիթորինգի և գնահատման համակարգի կիրառում	մինչև 2017թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն

<b>Թիրախային ոլորտ XIV - խմելու ջրի աղբյուր հանդիսցող ջրերի որակը</b>			
	<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>
14.1	Ջրամատակարարման աղբյուրների և կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտիների սահմանների ապահովում	60% աղբյուրների գոտիների ապահովում՝ մինչև 2018թ., առնվազն 95% աղբյուրների գոտիների ապահովում՝ մինչև 2020թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
14.2	Ջրամատակարարման աղբյուրների երկրորդ և երրորդ գոտիների սահմանագծերի որոշման մեթոդաբանության վերանայում և արդիականացում	մինչև 2020թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
<b>Համապատասխան միջոցառումներ</b>			
1	Խմելու ջրաղբյուրներից ստացվող խմելու ջրի մաքրման կառույցների կառուցում և վերակառուցում		ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ
2	Ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքների խմելու աղբյուր հանդիսացող ջրերի որակի ապահովում՝ ազգային ստանդարտներին համապատասխան		ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար կազմակերպություններ

**Թիրախային ոլորտ XVIII - հատկապես աղտոված տարածքների հայտնաբերում և**

<b>աղտազերծում</b>			
<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>	
18.1	Հատկապես աղտոտված տարածքների գնահատում և քարտեզավորում, ներառյալ՝ ջրային ռեսուրսների ավիամերձ տարածքները	պիլոտային գնահատում 1 մարզում՝ մինչև 2018թ., 3 մարզում՝ մինչև 2020թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
18.2	Ջրային ռեսուրսների որակի մոնիթորինգի համակարգի բարելավում	մինչև 2017թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
<b>Համապատասխան միջոցառում</b>			
1	Ջրային ռեսուրսների քանակական և որակական գնահատման համար մոնիթորինգի ցանցի օպտիմալացում		ՀՀ բնապահպանության նախարարություն

<b>Թիրախային ոլորտ XIX - ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը</b>			
<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>	
19.1	Ջրավազանային կառավարման պլանների մշակում	Արարատյան, Ախուրյանի և Հրազդանի ջրավազանային տարածքների համար՝ մինչև 2017թ., Հյուսիսային, Հարավային և Մևանի ջրավազանային տարածքների համար՝ մինչև 2020թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
19.2	Կենսաբանական մոնիթորինգի ուղեցույցի մշակում	մինչև 2018թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
19.3	Ջրային ռեսուրսների՝ ըստ ջրային մարմինների դասակարգում	մինչև 2018թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
19.4	Ջրավազանային տարածքային կառավարման բաժիններին կից ջրավազանային կառավարման խորհուրդների ստեղծում և դրանց բարեկանոն գործունեության ապահովում՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծման միջոցով	2 ջրավազանային կառավարման խորհուրդների ստեղծում՝ մինչև 2019թ., ևս 4 ջրավազանային կառավարման խորհուրդների ստեղծում՝ 2021թ.-ին	ՀՀ բնապահպանության նախարարություն
19.5	Ջրային ռեսուրսների որակի կառավարման ռազմավարության մշակում	մինչև 2016թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
<b>Համապատասխան միջոցառումներ</b>			
1	Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում	մինչև 2016թ.	ՀՀ կառավարություն
2	ՋՊԿ տվյալների բազայի հզորացման նպատակով շահագրգիռ հաստատությունների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացի օրենսդրական հիմնա-	մինչև 2015թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն

	վորում և մեխանիզմների ստեղծում		
3	Ջրավազանային կառավարման խորհուրդների գործունեության և իրավասությունների օրենսդրական հիմքի ստեղծում	մինչև 2018թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
4	Գործող ջրավազանային տարածքային կառավարման բաժինների կառավարման ֆունկցիաների և կարողությունների հզորացում	մինչև 2017թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
5	ՀՀ ստորերկրյա ջրային ռեսուրսների հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների ու դրանց վերլուծությունների կատարում և այդ ռեսուրսների դասակարգում՝ ըստ ջրի ազգային պաշարի և օգտագործելի ջրային ռեսուրսների	Արարատյան դաշտի համար՝ մինչև 2016թ.,, ամբողջ երկրի համար՝ մինչև 2018թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն, Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն
6	Ջրակոհամակարգերի բարելավման միջոցառումների պլանի մշակում	մինչև 2020թ.	ՀՀ բնապահպանության նախարարություն
7	Ջրային տնտեսության կառավարման համակարգերի ռեգիստրի ստեղծում	մինչև 2018թ.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

<b>Թիրախային ոլորտ XX - մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը</b>			
	<b>Նպատակներ</b>	<b>Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ</b>	<b>Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ</b>
20.1	Խմելու ջրի որակի վերաբերյալ տարեկան հաշվետվության հրատարակում	սկսած 2015թ.-ից	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ջրամատակարար ընկերություններ, առողջապահության նախարարություն
20.2	«Ջուր և առողջություն» արձանագրության համապատասխան ազգային զեկույցի հրապարակում	3 տարին մեկ անգամ՝ սկսած 2016թ.-ից	ՀՀ բնապահպանության նախարարություն, առողջապահության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն
20.3	«Ջուր և առողջություն» արձանագրության ոլորտների վերաբերյալ տեղեկատվական կենտրոնի ստեղծում	մինչև 2016թ.	ՀՀ առողջապահության նախարարություն
<b>Համապատասխան միջոցառում</b>			
1	«Ջուր և առողջություն» արձանագրության ազգային հաշվետվության և խմելու ջրի որակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակումների հասանելիության ապահովում հասարակայնության համար		ՀՀ բնապահպանության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն, առողջապահության նախարարություն

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը դեռ չի վավերացրել ՄԱԿ ԵՏՀ-ի «Ձուր և առողջություն» արձանագրությունը, ներկայումս ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ պաշտոնական շրջանառության մեջ է դրվել նախնական համաձայնեցված վերջնական թիրախները համապատասխան պետական կառավարման մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների շրջանում, որպեսզի վերջիններս ներկայացնեն իրենց կարծիքը և մեկնաբանությունները դրանց վերաբերյալ: Համապատասխան տեղեկատվությունը նաև տեղադրված է նախարարության կայքէջում՝ <http://www.mnp.am>:

### 3. Հայաստանի Հանրապետության «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի իրականացման միջոցառումների փուլային ծրագիրը

ՀՀ Ջրային օրենսգրքի (2002թ.) և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի (2005թ.) ընդունումից հետո՝ 2006թ.-ին ընդունվեց «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը: Ջրային օրենսգիրքը սահմանում է այն ոլորտները, որոնք պետք է կարգավորվեն ջրի ազգային ծրագրով՝ ջրային ռեսուրսների կառավարման տարբեր տեխնիկական և գիտական ասպեկտներից մինչև ջրի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և այլ ռեսուրսների գնահատականները: Ջրի ազգային ծրագրի իրականացումն ապահովվում է օրենքին կից՝ հավելվածի տեսքով հանդես եկող փուլային միջոցառումների ծրագրի միջոցով: Այն բաղկացած է 29 գործողությունից/միջոցառումից, որոնք պետք է իրականացվեն համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից կարճաժամկետ (մինչև 2010թ.), միջնաժամկետ (մինչև 2015թ.) և երկարաժամկետ (մինչև 2021թ.) հեռանկարներում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրագործման համար:

Համաձայն Ջրային օրենսգրքի և «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի պահանջների՝ փուլային միջոցառումների ծրագիրը սահմանվել և ընդունվել է ՀՀ կառավարության կողմից՝ հիմնվելով «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի պահանջների վրա: Հաստատումից հետո միջոցառումների ծրագիրը պետք է պարբերաբար թարմացվի կառավարության կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Միջոցառման (միջոցառումների) իրականացման համար պատասխանատու պետական լիազոր մարմինները պետք է կառավարությանը մինչև հաջորդ տարվա մարտի 25-ը ներկայացնեն հաշվետվություն միջոցառման (միջոցառումների) իրականացման առաջընթացի մասին: Հաշվետվությունը պետք է ներառի հանձնարարված միջոցառումների իրականացման կարգավիճակը (ավարտված կամ ընթացիկ), ֆինանսական ռեսուրսների մասին տեղեկատվությունը, անավարտ միջոցառումների վերաբերյալ հիմնավորումը, ինչպես նաև օրենքում արված փոփոխությունները: Կառավարությունը ՀՀ Ազգային ժողովին մինչև հաջորդ տարվա մայիսի 15-ը պետք է ներկայացնի ջրի ազգային ծրագրի կատարման մասին տարեկան հաշվետվություն՝ ամփոփելով միջոցառումների իրականացման մասին տարբեր պետական մարմինների ներկայացրած հաշվետվությունների արդյունքները, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, օրենքում առաջարկվող փոփոխությունները:

Այսպիսով, «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքը դառնում է անընդհատ վերանայվող ծրագիր, որը պետք է իրագործվի և պարբերաբար թարմացվի՝ հիմնվելով այն հարցերի վրա, որոնք դեռևս առկա են ջրի ոլորտում և պետք է լուծվեն՝ ջրային ռեսուրսների և

ջրային համակարգերի առավել արդյունավետ կառավարման և պահպանման հասնելու համար:

Ստորև բերված աղյուսակը նկարագրում է այն առաջընթացը, որն այսօրվա դրությամբ արձանագրվել է ջրի ազգային ծրագրով սահմանված նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցառումների իրականացման ոլորտում:

Աղյուսակ 2. Ջրի ազգային ծրագրի իրականացմանն ուղղված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների իրականացման կարգավիճակի ամփոփում

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
<p>Օրենսդրական հիմքերի ներդաշնակեցում, համալրում և բարելավում</p>	<p>1. Առկա օրենսդրական դաշտի միջնազավառային ներդաշնակեցում և կատարելագործում՝ ներառյալ ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջների իրականացման վերլուծությունը և դրանով նախատեսված գործառնությունների իրականացումը – <b>նոյեմբեր, 2010թ.</b></p> <p>2. Իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց, ջրի ազգային խորհրդի կազմում դրանց քննարկումներն ապահովող մշտական գործող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում – <b>նոյեմբեր, 2010թ.</b></p>	<p>Բոլոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միասնականությունը երաշխավորելու նպատակով միջնորդող մեխանիզմի կողմից ցանկացած նոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերանայում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b></p>	<p>Բոլոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միասնականության շարունակական ապահովում – <b>դեկտեմբեր, 2021թ.</b></p>	<p>ԲՊՆ, ՏԿՆ, ԱՆ, ԳՆ</p>	<p><b>1. Կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցառումները շարունակվում են:</b> Օրենսդրության բարելավումը, ինչպես նաև հոդված 121-ի պահանջների իրականացման վերլուծությունը շարունակական գործընթաց է՝ ջրային օրենսդրության, այդ թվում, ջրային օրենսգրքի պահանջների իրականացումն ապահովելու համար:</p> <p><b>2. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Չնայած այն հանգամանքին, որ այդ հարցերով մշտական գործող միջգերատեսչական հանձնաժողով չի ստեղծվել, Եվրամիության ջրային նախաձեռնության հովանու ներքո 2007թ.-ից Հայաստանում հաջողությամբ գործում է ԶՌՀԿ հարցերով ԱՔԵ ղեկավար հանձնախումբը: Վերջինս, որի կազմում ընդգրկված են բնապահպանության, գյուղատնտեսության, առողջապահության, էներգետիկայի և բնական ռեսուրսների, ֆինանսների, արտակարգ իրավիճակների, տարածքային կառավարման նախարարությունների, ինչպես նաև ակադեմիական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, իր ստեղծման օրից արդեն ունեցել է 12 հանդիպում: Ղեկավար հանձնախմբի հանդիպումների ժամանակ քննարկվում են ջրային քաղաքականության հարցեր, այդ թվում՝ օրենսդրական խնդիրներ: Եթե խմբի պաշտոնական կարգավիճակը պաշտոնապես փոխվի, այն կարող է ծառայել որպես մշտական</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					գործող միջգերատեսչական հանձնաժողով:
Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում	3. Ինստիտուցիոնալ և իրավական գնահատումների արդյունքում բացահայտված ջրային հատվածի հաստատություններում կրկնվող և բացակայող իրավասությունների և պատասխանատվությունների վերաբերյալ մշակված առաջարկությունների վերանայում և իրականացում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b>	Ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացի շարունակում՝ պատշաճ ուշադրություն դարձնելով ջրային ռեսուրսների մոնիթորինգի մշակված ծրագրերի և որակի ապահովման ծրագրերի առաջարկություններին – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացի շարունակականության ապահովում – <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ՏԿՆ, ԱՆ	<b>3. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման վերջին համապարփակ իրավական և ինստիտուցիոնալ վերանայումն իրականացվել է դեռևս 2005թ.-ին ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագրի կողմից: Գնահատումը ներառում է նաև առաջարկություններ և առաջարկվող գործողությունների ծրագիր՝ առաջարկությունների իրականացման համար: Այնուամենայնիվ, առաջարկությունների և առաջարկվող գործողությունների մեծ մասը մինչ օրս չեն իրականացվել:
Գերատեսչությունների միջև համագործակցության և համակարգման բարելավում	4. Ջրի ազգային խորհրդի կողմից միջգերատեսչական համագործակցության և համակարգման մեխանիզմների հստակեցում և բարելավում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b>			ԲՊՆ, ՏԿՆ, ԱՆ	<b>4. Չի ավարտվել:</b> Չնայած այն հանգամանքին, որ վերջին շրջանում ջրի ազգային խորհուրդն անցկացնում է ավելի հաճախակի հանդիպումներ, մինչ օրս միջգերատեսչական համագործակցության ոլորտում ոչ մի լուրջ բարելավում չի կատարվել:
Ջրավազանային կառավարման մարմինների զարգացում	5. Ջրավազանային կառավարման մարմինների ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրի մշակում – <b>նոյեմբեր 2010թ.</b>	ԶԿՄ-ների՝ ջրային ռեսուրսների համապարփակ պլանավորման և կառավարման հմտությունների զարգացում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Ավազանային կառավարման տարածքներում ԶԿՄ-ների լիազորությունների ընդլայնում <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ	<b>5. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է, իսկ միջնաժամկետ միջոցառումն ընթացքում է:</b> Թեև վերջերս ՀՀ ԲՊՆ ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը ԶԿՄ-ների համար սկսել է մշակել տարեկան աշխատանքային պլաններ, այդ պլանները հիմնականում վերաբերում են իրենց առօրյա գործառույթների իրականացմանը և չեն պարունակում ինստիտուցիոնալ զարգացման բաղադրիչ: Եթե ԶԿՄ-ներն իրենց համապատասխան ավազան-



Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					ներում չունենան ավելի շատ լիազորություններ ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում, դժվար կլինի մշակել և իրականացնել ինստիտուցիոնալ հզորացման ծրագիրը: Չնայած ԲՊՆ-ն նպատակ ունի աջակցել ջրային ռեսուրսների ապակենտրոնացված կառավարմանը, ՋԿՄ-ները դեռ չունեն բավարար իշխանություն նույնիսկ տեղական նշանակության ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տալու համար:
Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակում	<p>6. Մեկ ավազանային կառավարման տարածքի համար մոնիթորինգի համակարգի պիլոտային ծրագրի մշակում և փորձարկում - <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p> <p>7. Մոնիթորինգի ռազմավարության և ազգային ծրագրի մշակում, մոնիթորինգի ծառայությունների տարածքային ստորաբաժանումների տեխնիկական հզորացում, կարիքների գնահատում, կառուցվածքային բարեփոխումներ և տեխնիկական վերազինում, տվյալների էլեկտրոնային փոխանակման տարբերակի ստեղծում - <b>դեկտեմբեր,</b></p>	Մոնիթորինգի ռազմավարության և ազգային ծրագրի իրականացում: Մնացած ավազանային կառավարման տարածքների մոնիթորինգի համակարգերի և ծրագրերի մշակում և իրականացում` <b>ԶՌՀԿ պահանջների համաձայն – հոկտեմբեր, 2015թ.</b>	Մոնիթորինգի գործող համակարգերի գնահատում և հետագա բարելավում ազգային և ավազանային կառավարման տարածքների մակարդակով – <b>նոյեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ԱԻՆ	<b>6. Կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցառումներն ընթացքում են:</b> ԵՄ «Քուր գետի II փուլ» ծրագրի աջակցությամբ Հայաստանի Աղստև և Դեբեդ գետերի ավազաններում ԵՄ ՋՇԴ-ի սկզբունքներին համահունչ մոնիթորինգի ծրագրերը մշակվել են 2011թ.-ին: Մոնիթորինգի առաջարկվող համակարգը ներկայումս իրականացվում և փորձարկվում է Դեբեդի գետավազանում ԵՄ աջակցությամբ, որը ներառում է մակերևութային ջրերի կենսաբանական, հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկաքիմիական մոնիթորինգը: Ներկայումս ԲՊՆ-ն նախաձեռնել է ջրի որակի մոնիթորինգի և ջրի որակի գնահատման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծման գործընթաց, որն առաջիկա 2-3 տարիների ընթացքում պետք է աշխատի ԵՄ ՋՇԴ-ին համահունչ ջրի որակի մոնիթորինգի և ջրի որակի գնահատման համակարգին անցնելու ուղղությամբ: Աշխատանքային խումբը պետք է ուշադիր ուսումնասիրի մոնիթորինգի համակարգերը, որոնք մշակվել և փորձարկվել են Դեբեդ, Աղստև, Ախուրյան, Մեծամոր (Սևջուր) պիլոտա-

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
	<p><b>2010թ.</b></p> <p>8. Հայաստանում ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի համակարգի վերականգնում - <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p>				<p>յին ավազաններում և ուսումնասիրի ամբողջ երկրում դրանց ներդրման հնարավորությունը:</p> <p><b>7. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Այս միջոցառման իրականացմանն աջակցելու համար 2005-2011թթ. ԱՄՆ ՄԶԳ, ԵՄ, ՄԱԶԾ, ԳԷՀ և այլ դոնոր ծրագրերի կողմից մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք առաջարկում են ռազմավարություն և միջոցառումներ, ինչպես նաև մակերևութային ջրերի որակի և քանակի մոնիթորինգի բարելավման համար տեխնիկական ուղեցուցային փաստաթղթեր՝ հետևելով միջազգային լավագույն փորձին: Բոլոր այդ փաստաթղթերը ներկայացվել են համապատասխան պետական մարմիններին դրանց քննարկման համար:</p> <p><b>8. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է:</b> ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագրի աջակցությամբ 2007-2008 թթ. վերանորոգվել և ԲՊՆ հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոնին (ՀՄԿ) է հանձնվել ստորերկրյա ջրերի ազգային մոնիթորինգի հենակետային ցանցը, որը բաղկացած է 69 ջրադրյուրից և հորից: Հորերը և աղբյուրները, որոնք ներառված են մոնիթորինգի հենակետային ցանցում, ընտրվել են՝ հիմնվելով նախկինում օգտագործվող ստորերկրյա ջրերի մոնիթորինգի հորերի վիճակի բազմակողմանի գնահատման ուսումնասիրության վրա: Գնահատումը ներառում է նաև Հայաստանի հիդրոերկ-</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					<p>րաբանության նկարագրությունը և քարտեզագրումը:</p> <p>Ներկայումս ՀՄԿ-ն իրականացնում է ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումներ նմուշառման 70 դիտակետերում, այդ թվում՝ Հայաստանի 6 ջրավազանային կառավարման տարածքների 24 հորից և 46 ջրաղբյուրից: Ստորերկրյա ջրերի որակի համակարգված մոնիթորինգը բացակայում է: Այնուամենայնիվ, այս հենակետային ցանցը պետք է վերանախագծվի և ընդլայնվի՝ գետավազանային համապարփակ կառավարման պլանավորման գործընթացի համար անհրաժեշտ տվյալների պահանջները բավարարելու նպատակով:</p>
<p>Զրոգտագործման թույլտվություն տալու ընթացակարգի/իրավունքի ինստիտուտի կատարելագործում</p>	<p>9. Զրոգտագործման թույլտվությունների առկա կանոնակարգերի կատարելագործում, ինչպես նաև ջրոգտագործման թույլտվությունների հայտերի գերակայությունների գնահատման չափորոշիչների սահմանում – <b>դեկտեմբեր, 2009թ.</b></p> <p>10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող ջրոգտագործման դեպքում ջրոգտագործման թույլտվությունների հայտերի՝ շրջակա միջավայրի վրա</p>	<p>Զրոգտագործման թույլտվությունների ընթացակարգի շարունակական բարելավում, ներառյալ հասարակության ծանուցման և բողոքարկման մեխանիզմները - <b>հոկտեմբեր, 2015թ.</b></p> <p>Արդյունավետ և նպատակային ջրոգտագործմանը նպատակաուղղված իրավական կառուցվածքային, ինչպես նաև արտոնությունների տրման և (կամ) սահմանափակման ու</p>	<p>Ջրի ազգային խորհրդի վեճերը լուծող հանձնաժողովի դերի ամրապնդմանն ուղղված մեխանիզմների մշակում - <b>հունիս, 2021թ.</b></p>	<p>ԲՊՆ, ԱՆ</p>	<p><b>9. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է ուշացումով:</b> 2011թ. մայիսին ՀՀ կառավարությունն ընդունեց «Զրոգտագործման թույլտվության (ԶԹ) օրինակելի ձևաթուղթը և ջրոգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մարտի 7-ի թիվ 218-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 677-Ն որոշումը: Այս փոփոխությունները նպաստեցին ԶԹ-ների տրման գործող ընթացակարգերի բարելավմանը՝ ԶԹ-ների տրման, ԶԹ-ների տևողության երկարաձգման վերաբերյալ լրացուցիչ ընթացակարգերը, ինչպես նաև ԲՊՆ հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոնից ստացված հիդրոերկրաբանական տվյալների տրամադրման ձևաթղթերը հաստատելու միջոցով: Այս փոփոխությունները նաև հնարավորություն են տալիս ԶԹ-ների էլեկտրոնային հայտերի ներկայացման և տրման</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
	ազդեցության գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում - <b>դեկտեմբեր, 2009թ.</b>	տնտեսական լծակների ներդրման ծրագրի մշակում - <b>հոկտեմբեր, 2015թ.</b>  Ջրօգտագործման և ջրահեռացման ազդեցությունների գնահատման և վերլուծության ունակությունների շարունակական զարգացում - <b>հոկտեմբեր, 2015թ.</b>			համար:  <b>10. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է:</b> Ծրագիրն իրականացվել է 2009թ. պետական բյուջեի ֆինանսավորման շրջանակում: Դրան զուգահեռ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է. 1. «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումների սահմանելու մասին» ՀՀ կառավարության 30.06.2011թ. թիվ 927-Ն որոշումը, 2. «Արդիական տեխնոլոգիական կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 118-Ն որոշումը:
Ջրային պետական կադաստրի վարման ինստիտուտի կատարելագործում	11. Ջրային պետական կադաստրի կարճաժամկետ ծրագրի մշակում և իրականացում՝ ներառյալ ջրային ռեսուրսների կոդավորման համակարգի մշակումը և ներդրումը, պետական ջրային կադաստրի վարման արդի մեխանիզմների ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև ջրային ռեսուրսների կոդավորման համակար-	Ջրային պետական կադաստրի միջնաժամկետ ծրագրի մշակում և տեղեկատվական համակարգի շարունակական բարելավում: Ջրային բնագավառին վերաբերող տվյալների բազայի կառավարման մեխանիզմի կատարելագործում: Ըստ ջրավազանային տարածքների՝ տվյալների բազայի	Մահմանված երկարաժամկետ նպատակին հասնելու ուղղությամբ կադաստրի հետագա զարգացում, ներառյալ՝ պատասխանատվությունների փոխանցումը ջրավազանային կառավարման մարմիններին, և կադաստրի օգտագործումը ջրավազանային մակարդակում համապարփակ պլանավորման և	ԲՊՆ, ԱԻՆ, ԷԲՌՆ	<b>11. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է:</b> Պետական բյուջեի ֆինանսավորմամբ (ՀՀ 2007-2010 թթ. միջնաժամկետ պետական ծախսերի ծրագրեր), ինչպես նաև ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագրի տեխնիկական աջակցությամբ ջրային պետական կադաստրը մշակվել և գործարկվել է:

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
	գերի մշակումը և ջրային ռեսուրսների կողավորումը – <b>հոկտեմբեր, 2010թ.</b>	ստեղծում:  Տվյալների փոխանակման էլեկտրոնային տարբերակի ստեղծում և հետագայում արդյունավետ շահագործման համար պայմանների ապահովում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	կառավարման համար - <b>դեկտեմբեր, 2021թ.</b>		
Զրային ոլորտի կառավարման գործընթացում հասարակության իրազեկման և մասնակցության բարելավում	12. Ազգային և ջրավազանային կառավարման տարածքների մակարդակներով ջրային ռեսուրսների պլանավորման և կառավարման վերաբերյալ հասարակության տեղեկատվության և մասնակցության ապահովում – <b>սեպտեմբեր, 2010թ.</b>  13. Ավագանային հասարակական խորհուրդների զարգացման ռազմավարության մշակում և իրականացում, ավագանային հասարակական խորհուրդների տեխնիկական հզորացում – <b>սեպտեմբեր, 2010թ.</b>	Ավագանային մակարդակով ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակման, իրականացման և վերահսկման գործընթացներում շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ ավագանային հասարակական խորհուրդների և հասարակության մասնակցությունն ապահովող ընթացակարգերի մշակում և իրագործում – <b>հոկտեմբեր, 2015թ.</b>		ԲՊՆ, ՏԿՆ	<b>12. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Այս միջոցառումն իրականացնելու համար կարելի է օգտագործել հանրային մասնակցության մասին ԵՄ ՁՇԴ-ի համընդհանուր իրականացման ռազմավարության ուղեցուցային փաստաթուղթը, որը որոշում ընդունողներին և իրավասու մարմիններին ապահովում է ցուցումներով, թե ինչպես կարելի է օգտագործել հանրային մասնակցությունը և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը ջրային ռեսուրսների կառավարումը բարելավելու նպատակով:  <b>13. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> 2003-2004թթ. ԱՄՆ ՄԶԳ «Խրամի-Դեբեդ գետավազանների համապարփակ պլանավորման համար տարածաշրջանային ծրագիրն» աջակցեց ավագանային հանրային խորհուրդների հիմնադրամի ստեղծմանը Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում, որը դադարեց աշխատել ծրագրի ավարտից հետո: Այնուհետև, 2005թ.-ին ավագանային հասարակական խորհուրդների ստեղծման հնարավորու-

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					<p>թյուններ առաջարկվեցին ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացում» ծրագրի կողմից՝ հիմնվելով հարցերի վերլուծության վրա և հետևելով լավագույն միջազգային փորձին: Աջակցություն ցուցաբերվեց մեկ այլ փորձնական ԱՀԽ-ի ստեղծմանը Հարավային ջրավազանային կառավարման տարածքում: Պարզվեց, որ այս ԱՀԽ-ն ևս կայուն չէ և մեծապես կախված է դոնորների աջակցությունից:</p>
<p>Ջրի ազգային ծրագրի իրականացում – վերահսկողություն</p>	<p>14. ՀՀ ջրի ազգային ծրագրի իրականացման և թարմացման շարունակական մոնիթորինգի և գնահատման իրականացում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p> <p>15. Ծրագրի իրականացման վերահսկողության համակարգի ստեղծում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p>	<p>Շարունակական իրականացում և վերահսկողություն – <b>դեկտեմբեր, 2015թ.</b></p>	<p>Շարունակական իրականացում և վերահսկողություն – <b>դեկտեմբեր, 2021թ.</b></p>	<p>ԲՊՆ, ՏԿՆ</p>	<p><b>14. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Չնայած այն հանգամանքին, որ այս պահի դրությամբ չկա որևէ նշանակված գործակալություն, որը կարող է պատասխանատվություն կրել ՋԱԾ-ի իրականացման շարունակական մոնիթորինգի համար, այնուամենայնիվ, կան որոշ հնարավորություններ՝ կապված վերջերս ԲՊՆ կազմում ջրային ռեսուրսների քաղաքականության բաժնի ստեղծման հետ: Բաժնի հիմնական խնդիրները ներառում են՝ ջրային ռեսուրսների պահպանության պետական քաղաքականության ձևավորումը, քաղաքականության ծրագրերի և ռազմավարական ուղղությունների մշակումը և դրանց իրականացման մոնիթորինգը: Բաժնի կոնկրետ գործառույթներից մեկը ջրի ազգային քաղաքականության մշակումն է և դրա իրականացման մոնիթորինգը, բայց ոչինչ չի նշվում, մասնավորապես, ՋԱԾ-ի մասին: Սակայն, հաշվի առնելով բաժնի ընդհանուր խնդիրը, այն է՝ իրականացնել քաղաքականության ծրագրերի և ռազմավարական ուղղությունների իրականացման մոնիթորինգ,</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					<p>այն պետք է պատասխանատու լինի ԶԱԾ-ի իրականացման շարունակական մոնիթորինգ իրականացնելու համար:</p> <p><b>15. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Այն բանից հետո, երբ ջրային ռեսուրսների քաղաքականության բաժինը պաշտոնապես կնշանակվի որպես պատասխանատու մարմին ԶԱԾ-ի շարունակական մոնիթորինգ և գնահատում իրականացնելու համար, այն կկարողանա ստեղծել մոնիթորինգի կայուն համակարգ:</p>
<p>Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակում</p>	<p>16. Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունում և ջրավազանային կառավարման մարմիններում հզորությունների ստեղծում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման համար – <b>նոյեմբեր, 2010թ.</b></p> <p>17. Մեկ ավազանային կառավարման տարածքի համար պիլոտային ջրավազանային կառավարման պլանի մշակում և տեղեկատվական կարիքների բացահայտում – <b>նոյեմբեր, 2010թ.</b></p>	<p>Նմանատիպ ջրավազանային կառավարման պլանների մշակում մնացած չորս ավազանային կառավարման տարածքների համար – <b>դեկտեմբեր, 2015թ.</b></p>	<p>Հինգ ավազանային կառավարման տարածքների համար ջրավազանային կառավարման պլանների պարբերաբար թարմացում և շարունակական իրականացում - <b>դեկտեմբեր, 2021թ.</b></p>	<p>ԲՊՆ</p>	<p><b>16. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է:</b> 2005թ.-ից աշխատավայրում և աշխատանքից դուրս ԶՌԿԳ-ի և ԶԿՄ-ների, ինչպես նաև այլ հիմնական շահագրգիռ հաստատությունների համար ԶՌՀԿ-ի տարբեր ասպեկտների վերաբերյալ իրականացվել են ինտենսիվ ուսուցման կարողությունների զարգացման ծրագրեր: ԱՄՆ ՄԶԳ-ի և ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունների շրջանակում կազմակերպվել են մի շարք ուսուցողական շրջագայություններ:</p> <p><b>17. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b> ԱՄՆ ՄԶԳ-ի, ԵՄ-ի, ԳԷՀ-ի ՄԱԶԳ-ի, ՄԱԿ ԵՏՀ-ի և այլ դոնորների աջակցությամբ մշակվել են գետավազանային կառավարման պլանների նախագծեր Մարմարիկ, Մեղրիգետ, Դեբեդ, Աղստև, Որոտան և Արփա գետերի ավազանների համար: Ներկայումս այդպիսի պլաններ մշակվում են Ախուրյան և Մեծամոր</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					<p>(Սևջուր) գետերի ավազանների համար: Դրանց մեծ մասը նաև բացահայտել են տվյալների և տեղեկատվության էական բացեր, որոնք անհրաժեշտ են ԵՄ ԶՇԴ սկզբունքներին համահունչ ԳԿՊ մշակելու համար:</p> <p>ԵՄ ջրային նախաձեռնության շրջանակներում Մարմարիկի գետավազանի օրինակով մշակվել է «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային նիստի որոշման նախագիծը, որը հաստատվել է 2011թ. փետրվարի 3-ի թիվ 4 որոշմամբ: Այն հիմք կհանդիսանա վեց ջրավազանային կառավարման պլանների տեխնիկական բնութագրերի կազմման և պլանների մշակման համար:</p>
Սևանա լճի գործողությունների պլանի իրականացում	18. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների» տարեկան և համալիր ծրագրի վերանայում և բարելավում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b>	Սևանա լճի գործողությունների ծրագրի իրականացում հատուկ միջգերատեսչական հանձնախմբի կողմից – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Սևանա լճի գործողությունների ծրագրի իրականացման շարունակում: Ծրագրի իրականացման արդյունավետությունը երաշխավորելու նպատակով Սևանա լճի վրա ծրագրի ազդեցության մոնիթորինգ և գնահատում – <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ՏԿՆ	<b>18. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է:</b> «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (2001թ.), 2001թ.-ին ընդունվեց ՀՀ մեկ այլ օրենք «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրի մասին», որն այդ ժամանակից ի վեր ենթարկվել է պարբերաբար վերանայման և նորացման: 2008թ. հունիսին միջոցառումների տարեկան և համալիր ծրագիրը վերանայվեց՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման առաջնահերթությունների հիման վրա: Մի շարք առաջարկվող միջոցառումների իրականացումը ֆինանսավորվել է Հայաստանի 2007-2009 թթ. միջնաժամկետ պետական ծախսային



Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					ծրագրով:
<p>Զրային ռեսուրսների և ջրային պաշարների բաղադրիչների գնահատում</p>	<p>19. Զրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների արդիական բնութագրերի ճշգրտում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p> <p>ա) մակերևութային բնական վերականգնվող հոսքի քանակական և որակական տարածաժամանակային բնութագրերի ճշգրտում՝ հաշվի առնելով վերջին չորս տասնամյակների ընթացքում կուտակված քանակական և որակական մոնիթորինգի տվյալները, հոսքի վրա կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունները,</p> <p>բ) մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների տարանջատված գնահատման հստակեցում, խորքային հոսքի ճշգրտում,</p> <p>գ) հիմնական գետերի նվազագույն էկոլոգիական թողքի որոշման մեթոդների մշակում և հաշ-</p>	<p>Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական և որակական բնութագրերի համալրում ջրավազանային կառավարման պլաններում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b></p>		ԲՊՆ	<p><b>19. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b></p> <p>ա) Իրականացվել է ոչ ամբողջությամբ, բացառությամբ՝ որոշ կարևոր հիդրոլոգիական բնութագրերի, որոնք նախատեսված են ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 29-ի թիվ 549-Ն որոշմամբ, որը վերաբերում է ջրային հաշվեկշռի տարրերի հաստատմանը՝ ըստ գետային ավազանների և ջրային ռեսուրսների, ինչպես նաև պաշարների բաշխմանը,</p> <p>բ) չի իրականացվել,</p> <p>գ) ընդունվել է ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 20-ի թիվ 927-Ն որոշումը, որն, ի թիվս այլ բաների, հաստատում է բնապահպանական հոսքերի հաշվարկման մեթոդաբանությունը,</p> <p>դ) չի իրականացվել:</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
	վարկ, դ) հիմնական գետերի նվազագույն էկոլոգիական թողքի որոշման մեթոդների մշակում և հաշվարկ:				
Ջրի որակի ապահովման չափանիշների/ նորմերի սահմանում և իրականացում	20. Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի սահմանման միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության համապատասխանեցում և ներդրում՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված մոտեցումները – <b>դեկտեմբեր, 2009թ.</b>	Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի և ջրի որակի ապահովման նորմերի մշակում և ընդունում: Ավագանային կառավարման տարածքների մակարդակով ջրի որակի ապահովման նորմերի ընդունում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի իրավակիրարկում: Ավագանային կառավարման տարածքների մակարդակով ջրի որակի ապահովման նորմերի ընդունում – <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ԷՆ, ԱՆ	<b>20. Կարճաժամկետ միջոցառումն ավարտվել է:</b> ՀՀ կառավարությունը 2011թ. հունվարին ընդունեց «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշումը, որը հիմնվում է միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության վրա: Այդ նորմերը պետք է վերանայվեն/թարմացվեն ընդունումից հետո 6 տարվա ընթացքում, ինչը թույլ կտա լիովին հաշվի առնել ավագանային կառավարման տարածքների հիդրոմորֆոլոգիական, հիդրոերկրաբանական, հիդրոֆիզիկական, բնապահպանական և այլ առանձնահատկությունները:
Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում	21. Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանման մեթոդաբանության մշակում՝ ներառյալ հոսքի ձևավորման գոտիները, ստորերկրյա ջրերի պահպանման գոտիները, ջրապահպան գոտիները, էկոտոնը, ջրային ավազանում արտակարգ էկոլոգիական իրավիճակի և էկոլոգիական	Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում՝ համաձայն մշակված մեթոդաբանության, քարտեզագրում և պահպանում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների մոնիթորինգ – <b>հոկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ՏԿՆ	<b>21. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b> Հետևելով ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջներին՝ ՀՀ կառավարությունը 2005թ. -ի հունվարի 20-ին մշակել և հաստատել է «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» թիվ 64-Ն որոշումը:

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
	աղետի գոտիները, անօտարելի գոտիները – <b>նոյեմբեր, 2010թ.</b>				
Արարատյան դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի կարգավիճակի ուսումնասիրություն	22. Արարատյան դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի օգտագործման ծրագրերի մշակում և իրականացում - <b>նոյեմբեր, 2010թ.</b>	Արարատյան դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի օգտագործման ծրագրերի իրականացում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Նախաձեռնվող միջոցառումների ազդեցության մոնիթորինգ և գնահատում – <b>նոյեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ԳՆ, ՏԿՆ	<b>22. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b> Արարատյան դաշտի դրենաժային համակարգի վերականգնումն իրականացվել է 2010-2012թթ. «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ (ՀՄՀ) - Հայաստան» ծրագրի ոռոգման ենթակառուցվածքների գործունեության շրջանակում: Նախքան վերականգնողական աշխատանքները սկսելը, անցկացվել է Արարատյան դաշտի գերիտնավ տարածքների բնապահպանական/հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրություն: Դրենաժային համակարգի վերականգնումը ներառում էր դրենաժային առուների հին խցանումների հեռացումը, կոլեկտորների, երկրորդային և երրորդային դրենաժային առուների մաքրումը և խորացումը, դրենաժային համակարգի բարելավումը՝ կառուցելով ջրատար խողովակներ և բազմաթիվ փոքր կառույցներ, մի շարք արտեզյան հորերի վերականգնումը, սահմանափակ քանակությամբ աշխատանքները գրունտային ջրերի հեռացման համակարգում՝ միաժամանակ պահպանելով ջրային տարածքների օպտիմալ հավասարակշռված էկոհամակարգը: Որպես հետևանք՝ ստորերկրյա ջրերի մակարդակը այժմ երկու մետր ցածր է, և արդեն կարելի է մշակել ավելի բարձրարժեք մշակաբույսեր:
Ջրերի ռազմավարական պահպանում	23. Ջրամբարաշինության հեռանկարային ծրագրի	Ջրամբարաշինության հեռանկարային ծրագրի	Ջրամբարաշինության հեռանկարային ծրագրի		<b>23. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b> Ջարգացման գերմանական բանկի

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
<p>շարժների ավելացում և գետային հոսքի կարգավորում</p>	<p>հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացում - <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p>	<p>հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացման շարունակություն – <b>դեկտեմբեր, 2015թ.</b></p>	<p>հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացման շարունակություն – <b>դեկտեմբեր, 2021թ.</b></p>		<p>Ֆինանսավորմամբ՝ ընտրված խորհրդատուն 2013թ.-ին սկսեց Կապսի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունը: Սկզբնական փուլում նախատեսվում է վերականգնել ջրամբարը ցածր մակարդակի վրա՝ ապահովելով մոտ 6 մլն մ<sup>3</sup> տարողություն և 2200 հա ոռոգման համար ինքնահոս ջրամատակարարում, ինչը ներկայումս մատակարարվում է պոմպերի միջոցով (կամ ոչ ոռոգելի հողատարածքներ են):</p> <p>Զարգացման ֆրանսիական գործակալություն Ֆինանսավորմամբ՝ 2013թ.-ին սկսվեց 20 մլն մ<sup>3</sup> ընդհանուր ամբարման ծավալով (պատվարի բարձրությունը 70 մ) Վեդիի ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունը: Ջրամբարի կառուցմամբ հնարավոր կլինի ոռոգել 2744 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, ինչպես նաև ձերբագատվել ջրանի կառույցներից:</p> <p>ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում Մաստարա գետի վրա նախատեսվում է կառուցել Մաստարայի ջրամբարը, որի ընդհանուր ամբարման ծավալը կկազմի 10.2 մլն մ<sup>3</sup> (ամբարտակի նախատեսված բարձրությունը 30 մ է): Դա կկուտակի Սելավ-Մաստարա գետի ազատ հոսքը Ախուրյանի ջրամբարից մինչև Թալինի ոռոգման համակարգի գլխամասային կառույցի միջև ընկած հատվածում: Ջրամբարի կառուցումը թույլ կտա տարածաշրջանում ոռոգել 4384 հա գյուղատնտեսական հողեր: Որպես հնարավոր ֆինանսավորող, Քուվեյթի զարգացման հիմնա-</p>

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					դրամը ծրագրում է իրականացնել գնահատման առաքելություն: Բացի այդ, ՀՀ կառավարությունը դիմել է նաև ՃՄՀԳ-ին՝ Եղվարդի ջրամբարի կառուցման համար, որի ընդհանուր պահեստավորման ծավալը նախատեսվում է 90 մլն մ <sup>3</sup> (ամբարտակի բարձրությունը՝ 32 մ):
Ջրերի որակի կառավարման իրականացում	24. Ջրերի որակի կառավարման ռազմավարության մշակում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b>	Ջրերի որակի կառավարման ռազմավարության իրականացում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Ջրերի որակի կառավարման ռազմավարության մոնիթորինգ և հետագա բարելավում – <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ	<b>24. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Ջրի որակի կառավարման մշակված ռազմավարությունը բացակայում է: Սակայն այս բացը լրացվում է այլ միջոցառումների իրականացմամբ, որոնք ընդգրկված են ընթացիկ փուլային ծրագրում, ինչպես, օրինակ՝ ջրօգտագործման թույլտվություն տալու ընթացակարգի բարելավումը (միջոցառումներ 9 և 10), ավագանային կառավարման պլանների մշակումը և իրականացումը (միջոցառումներ 16 և 17), ջրի որակի չափանիշների/նորմերի մշակումը և իրավակիրարկումը (միջոցառում 20):
Տարածքային պլանավորման չափանիշների և ուղեցույցների սահմանում	25. Տարածքային պլանավորման ներկա մոտեցումների վերանայում և բարելավում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b>	Ազգային և տարածաշրջանային մակարդակներում իրականացվող տարածական, ջրային ռեսուրսների և բնապահպանական պլանավորման գործընթացների ներդաշնակեցում – <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Ջրակոհամակարգերի պահպանման գոտիների պահպանմանն ուղղված կարգավորող և վերահսկող միջոցառումների շարունակական իրականացում – <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ԲՊՆ, ՏԿՆ	<b>25. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Տարածական պլանավորումն ունի առանցքային նշանակություն ջրավազանային տարածքներում ջրերի կառավարումը և հողօգտագործման պլանավորումը ներառելու համար: Սա հասկանալի կարևոր է Հայաստանի համար՝ հաշվի առնելով գետերի ֆիզիկական և տարածական բնութագրերը: Այնուամենայնիվ, համակարգումը տարածական պլանավորման, հողօգտագործման պլանավորման և ջրային ռեսուրսների կառավարման համակարգերի միջև բավական թույլ է:

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՈՆԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարում	26. Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագրի մշակում - <b>դեկտեմբեր, 2010թ.</b>	Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագրի իրականացում - <b>դեկտեմբեր, 2015թ.</b>		ԲՊՆ, ՏԿՆ	<b>26. Կարճաժամկետ միջոցառումը չի ավարտվել:</b> Որևէ ծրագիր չի մշակվել, սակայն Հայաստանն ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանում անդրսահմանային ջրերին առնչվող բոլոր ծրագրերին և նախաձեռնություններին: Պաշտոնապես Հայաստանը ստորագրել է անդրսահմանային ջրային ռեսուրսների վերաբերյալ մի շարք միջազգային համաձայնագրեր իր հարևան երկրների հետ (Թուրքիայի հետ ստորագրվել են 1927թ., 1964թ., 1973թ., 1975թ., 1990թ., Վրաստանի հետ՝ 1971թ. և 1997թ., Ադրբեջանի հետ՝ 1974թ., Իրանի հետ՝ 1957թ. և 2006թ. պայմանագրերը): Սակայն, համատեղ մոնիթորինգի և/կամ չափումների իրականացման գործողությունները կատարվում են միայն Թուրքիայի և Իրանի հետ:
Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	27. Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների (խմելու-կենցաղային ջրամատակարարում, ոռոգում, հիդրոէներգետիկա և այլն) իրականացման ուսումնասիրություն և դրանց մատուցման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում - <b>դեկտեմբեր, 2010թ.</b>	Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրականացման նկատմամբ արդյունավետ վերահսկման մեխանիզմի մշակում և ներդրում - <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների շարունակական զարգացում և բարելավում - <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ՏԿՆ, ԲՊՆ, ԱՆ	<b>27. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b> Զրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մի շարք հետազոտություններ են իրականացվել 2006-2010թթ. Համաշխարհային բանկի, ԶԳԲ-ի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ ՄԶԳ-ի, ՏՀԶԿ-ի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության, ՀՄՀ - Հայաստանի և ուրիշների կողմից: Դրանք համակարգվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից: Այդ հետազոտությունների արդյունքում տրամադրվել են առաջարկություններ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման համար, այդ թվում ծախսերի

Հիմնախնդիր	Կարճաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները և դրանց իրականացման վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը	ԶՌՀԿ-ի համար միջոցառումների իրականացման կարգավիճակը և տեխնիկական գնահատականը
					վերականգնումը, որոնք օգտագործում օպերատորներն այդ ծառայությունների մատուցման համար:
Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովում	<p>28. Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում - <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p> <p>29. Պետական նշանակության հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման և պահպանության համար պատասխանատուների հստակեցում – <b>դեկտեմբեր, 2010թ.</b></p>	Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում - <b>դեկտեմբեր, 2015թ.</b>	Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման մոնիթորինգ և բարելավում - <b>դեկտեմբեր, 2021թ.</b>	ՏԿՆ, ԷԲՌՆ, այլ համապատասխան նախարարություն)	<b>28. Կարճաժամկետ միջոցառումն իրականացվել է մասամբ:</b> ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն Համաշխարհային բանկի, ՀՄՀ-Հայաստանի, ԱԶԲ-ի և այլ դոնորների աջակցությամբ մշակել և իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են ապահովելու հիդրոտեխնիկական կառույցների անվտանգությունը և աշխատանքների հուսալիությունը: Նմանատիպ ծրագրեր մշակել է նաև ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը: Հատուկ միջոցառումներ են իրականացվել պետական բյուջեի ֆինանսավորմամբ և դոնոր կազմակերպությունների՝ վարկերի և դրամաշնորհների տեսքով տրամադրած ներդրումների հաշվին:

#### 4. Դոնորների ծրագրերը համապատասխան թիրախային ոլորտներում

Այս բաժինը նկարագրում է իրականացված, շարունակական և նախատեսվող ծրագրերը, որոնք որոշակի չափով առնչվում են Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության ընտրված 9 առաջնային ոլորտներից մեկ կամ մի քանի ոլորտներին: Հետևյալ երկկողմ և բազմակողմ դոնորները, միջազգային կազմակերպությունները, միջազգային ֆինանսական կազմակերպությունները և բանկերը ակտիվ ներգրավվածություն են ապահովել Հայաստանի ջրային ոլորտում և, մասնավորապես, «Ջուր և առողջություն» արձանագրության համապատասխան թիրախային ոլորտներում:

##### ***Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)***

Հայաստանը դարձավ անդամ 2005թ.-ին և այդ ժամանակվանից սկսած, ի թիվս այլ ոլորտների, ԱԶԲ-ն աջակցություն է ցուցաբերել երկրի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտին, որոնք առնչվում են թիրախային I (մատակարարվող խմելու ջրի որակը), II (ջրի հետ կապված բնկումների և հիվանդությունների կրճատումը), III (խմելու ջրի մատչելիությունը), IV (ջրահեռացման մատչելիությունը) և XIV (խմելու ջրի աղբյուր հանդիսցող ջրերի որակը) ոլորտներին:

##### ***Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)***

ՎԶԵԲ-ը Հայաստանի հետ աշխատել է դեռևս 1992թ.-ից և դարձել Հայաստանի մասնավոր ձեռնարկություններում և ֆինանսական հատվածներում խոշորագույն ներդրողներից մեկը: Ի թիվս այլ ներդրումների՝ ՎԶԵԲ-ն աջակցել է Երևանի և փոքր համայնքների ջրամատակարարման և Սևանա լճի պահպանության տարբեր ծրագրերին՝ կեղտաջրերի առավել արդյունավետ կառավարման միջոցով: 2012-2015թթ. համար ՎԶԵԲ-ի գերակայությունները ներառում են շարունակական աջակցությունը քաղաքային և բնապահպանական ենթակառուցվածքների ոլորտներին: Այսպես՝ ՎԶԵԲ-ն օժանդակում է թիրախային I, II, III, IV, XI (կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակը) և XVIII (հատկապես աղտոված տարածքների հայտնաբերում և մաքրում) ոլորտներին:

##### ***Եվրոպական միություն/Եվրոպական հանձնաժողով (ԵՄ/ԵՀ)***

Վերջին տասնամյակում նշանակալի աջակցություն է տրամադրվել Հայաստանի՝ որպես Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքի (ԵՀՔԳ) շրջանակում առաջնահերթ գործընկեր երկրի ջրային ոլորտին, ինչպես նաև համաձայն ԵՄ-Հայաստան գործողությունների համատեղ ծրագրի, ներառյալ հետևյալը.

- Անդրսահմանային Քուռ գետի ավազանի կառավարման ծրագրերը (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան)՝ 2002-2004թթ. (ԵՄ Քուռ գետի ծրագիր) և 2008-2013թթ. (ԵՄ Քուռի գետավազանի ծրագրի II և III փուլեր), որոնք աջակցել են մոնիթորինգի և տեղեկատվության կառավարման ընդհանուր համակարգի զարգացմանը՝ Քուռ գետի ավազանում անդրսահմանային համագործակցությունը բարելավելու համար: Ծրագրերի շրջանակում ԵՄ ՋՇԴ-ի պահանջների հիման վրա մշակվել են Աղստև և Դեբեդ գետավազանների կառավարման պլաններ, և մշակվել են ԵՄ ՋՇԴ-ին համապատասխան մոնիթորինգի ծրագրեր՝ պիլոտային ավազանների համար,



- Հայաստանում բնապահպանական տեղեկատվության փոխանակման համակարգի զարգացումը, ներառյալ՝ ջրային ոլորտը,
- Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանության ծրագիրը, որին մասնակցում են Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելառուսը, Ուկրաինան և Մոլդովան, մշակում է ԵՄ ՋՇԴ-ին համապատասխան ջրավազանային կառավարման պլաններ Հայաստանի Ախուրյան գետավազանի կառավարման համար (Մեծամոր և Ախուրյան գետերի ավազաններ),
- Հայաստանում ջրամատակարարման աշխատանքները տնային տնտեսության մակարդակում:

Այսպիսով, ԵՄ/ԵՀ-ն օժանդակում է արձանագրության թիրախային III, XI, XVIII և XIX (ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը) ոլորտներին:

***Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)***

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 2000թ.-ից: ԵԱՀԿ-ն, հանրային մասնակցության և տարածաշրջանային համագործակցության նպատակով, օժանդակել է Հայաստանի կառավարությանը Օրհուսի ցանցի, բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի ստեղծման և շահագործման հարցում: Շրջակա միջավայրի և անվտանգության նախաձեռնությունը (ԵԱՀԿ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ ԵՏՀ, ՄԱԶԾ, ՏԲԿ և ՆԱՏՕ) ներառում է ծրագրեր Հարավային Կովկասի տարածաշրջանում անդրսահմանային ջրերի, բնապահպանության և կլիմայի փոփոխության ուսումնասիրությունների բնագավառներում, իսկ ԵԱՀԿ-ն օգնում է իրագործել այդ ծրագրերի՝ Հայաստանին առնչվող ազգային բաղադրիչները: Այսպիսով՝ ԵԱՀԿ-ն իր ներդրումն ունի արձանագրության թիրախային II, XVIII և XIX ոլորտներում:

***Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ)***

ՏՀԶԿ-ն Հայաստանում ազգային քաղաքականության երկխոսության հարցերով ԵՄ ջրային նախաձեռնության հովանու ներքո իրականացվող ՋՌՀԿ բնագավառում ազգային քաղաքականության երկխոսության ջրամատակարարման և ջրահեռացման և տնտեսական ու ֆինանսական ասպեկտների ենթաբաղադրիչների ռազմավարական գործընկեր է: ՏՀԶԿ-ն իրականացրել է ջրային ռեսուրսների կառավարման առկա տնտեսական մեխանիզմների համապարփակ վերլուծություն Հայաստանում Մարմարիկ և Դեբեդ գետերի պիլոտային ավազաններում, ինչպես նաև առաջարկել է գործող տնտեսական մեխանիզմների բարեփոխումներ ազգային մակարդակով, ինչպես նաև նոր մեխանիզմների ընդունում: 2013թ.-ից ՏՀԶԿ-ն աշխատում է Հայաստանում կեղտաջրերի հավաքման և հեռացման ռազմավարության մշակման ուղղությամբ, որը կապահովի կոնկրետ առաջարկություններ ֆինանսապես իրատեսական եղանակով ազգաբնակչության ընգրկվածությունը բարձրացնելու վերաբերյալ: Այսպիսով՝ ՏՀԶԿ-ն իր աջակցությունն է բերում արձանագրության թիրախային III, IV, XVIII, XI և XIX ոլորտներին:

***ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)***

ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակը գործում է 1993թ.-ից: Կազմակերպությունը աջակցություն է ցուցաբերում կառավարությանը՝ իրականացնելու զարգացման ազգային առաջնահերթությունները և մինչև 2015թ.-ը հասնելու հազարամյակի զարգացման նպատակներին: Ի թիվս այլ բաների՝ ՄԱԶԾ-ն աջակցություն է ցուցաբերել Շրջակա միջա-

վայրի գործողությունների ազգային առաջին (1998թ.) և երկրորդ (2008թ.) ծրագրերի մշակմանը, որոնք ներառում են ջրի վերաբերյալ բաժիններ: Բացի այդ, ՄԱԶԾ-ն աջակցել է 2012-2013թթ. Սևանի ավիամերձ գոտու մաքրման ծրագրին և իրականացրել է «Վերակենդանացնել գետը» նախագիծը, որի նպատակն էր բարելավել կեղտաջրերի կառավարումը Աղստև գետի ավազանում 2009-2013թթ.: Այսպիսով՝ ՄԱԶԾ-ն օժանդակություն է ցուցաբերում արձանագրության թիրախային IV, XVIII և XIX ոլորտներին:

### ***Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (ԳԷՀ)***

Հայաստանում ԳԷՀ-ն աջակցում է բնական պաշարների, այդ թվում՝ ջրային ռեսուրսների կառավարման ծրագրերին: ՄԱԶԾ-ի հետ համագործակցությամբ ԳԷՀ-ն իրականացնում է անդրսահմանային Քուռ-Արաքս գետավազանում դեգրադացիայի կրճատմանն ուղղված շարունակական տարածաշրջանային ծրագիրը, որն աշխատում է բացահայտված անդրսահմանային ջրերի հետ կապված առաջնահերթ խնդիրների ուղղությամբ: Բացի այդ, որպես ծրագրի մաս, մշակվել է Արփա գետի ավազանային կառավարման պլան: Հետևաբար ԳԷՀ-ն օժանդակություն է ցուցաբերում արձանագրության թիրախային XVIII և XIX ոլորտներին:

### ***ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)***

ԱՄՆ կառավարությունը եղել է խոշորագույն երկկողմանի դոնոր Հայաստանում, և ԱՄՆ ՄԶԳ-ն ակտիվորեն ներգրավված է եղել Հայաստանի ջրային տնտեսության ոլորտում: 2000թ.-ից ԱՄՆ ՄԶԳ-ն ֆինանսավորել է Հայաստանում ջրերի մի շարք ազգային և տարածաշրջանային ծրագրեր, որոնք օգնել են Հայաստանին հասնելու չափելի առաջընթացի ջրերի կառավարման ոլորտում՝ ֆիզիկական ենթակառուցվածքների բարելավման, ինչպես նաև ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների միջոցով: ԱՄՆ ՄԶԳ-ն ցուցաբերել է աջակցություն Հայաստանում ՋՌՀԿ սկզբունքների ներդրման, ջրօգտագործման թույլտվությունների տրման ընթացակարգի ներդրման և ամրապնդման, ջրային պետական կադաստրում տեղեկատվական համակարգի մշակման և ջրերի կառավարման ոլորտում հզորությունների համակողմանի զարգացման, այդ թվում՝ գետավազանային պլանավորման և կառավարման, հարցերում (Մեղրիգետ, Որոտան և Ողջի գետերի ավազանները Հայաստանի Հարավային ջրավազանային կառավարման բաժնում): ԱՄՆ ՄԶԳ «Մաքուր էներգիա և ջուր» 2011-2015թթ. ծրագիրը, ի թիվս այլ բաների, կենտրոնանում է Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի խնդրին՝ կապված ձկնաբուծության ինտենսիվ զարգացման հետ: Այսպիսով՝ ԱՄՆ ՄԶԳ-ն նպաստել է թիրախային I, II, III, IV, XVIII, XIX, XI և XX (մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը) ոլորտների բարելավմանը:

### ***Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (ՃՄՀԳ)***

Գործակալությունը Հայաստանի ջրային ոլորտում սկսել է աշխատել 2007թ.-ից: 2007-2009թթ. այն ֆինանսավորել է Հայաստանի Հանրապետությունում գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ուսումնասիրությունը: Ներկայումս ՃՄՀԳ-ն քննարկում է Հայաստանում ջրի հետ կապված մի շարք այլ ծրագրեր: Այսպիսով՝ ՃՄՀԳ-ն օժանդակություն է ցուցաբերում արձանագրության թիրախային I, II, III, IV, XIV, XIX և XX ոլորտներին:

### ***Զարգացման գերմանական բանկ (ԶԳԲ)***

ԶԳԲ-ն ակտիվորեն ներգրավված է ջրամատակարարման ծրագրերում, որոնք ուղղված են տեղական ջրամատակարարման օբյեկտների բարելավմանը Արմավիր, Մեծամոր, Գյումրի և Վանաձոր քաղաքներում, ինչպես նաև հարակից գյուղերում և քաղաքներում: ԶԳԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվող Կապի ջրամբարի վերաբերյալ ծրագիրը կդառնա նախատեսված ՋՌՀԿ պլանի մաս, որը ներառում է Արփի լճի պահպանությունը և տարածքում խմելու ջրամատակարարումը:

2014թ.-ին բանկը նախատեսում է կառուցել կեղտաջրերի մաքրման կայան Նոր Ակունքի սպասարկման տարածքում ընդգրկված խոշոր քաղաքներից մեկում, այդ թվում՝ ապահովելով կենսաբանական մաքրումը: Հետևաբար, բանկն աջակցում է արձանագրության թիրախային I, II, III, IV, XI, XIV, XVIII և XX ոլորտների բարելավմանը:

### ***Համաշխարհային բանկ (ՀԲ)***

Համաշխարհային բանկը Հայաստանում ջրային հատվածի աջակիցներից է: Իրականում ջրային տնտեսության ոլորտում բարեփոխումները երկրում սկսվել են 1999-2001թթ. «Դեպի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում» ծրագրից, որն առաջարկում էր ջրի կառավարման ոլորտում համալիր իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ճանապարհ էր հարթում ՋՌՀԿ սկզբունքների ներդրման համար: Հետագայում, ՀԲ-ն աջակցություն է ցուցաբերել երկրում ջրամատակարարման և կեղտաջրերի կառավարման, ինչպես նաև գետավազանային կառավարման ծրագրերին: Ներկայում ՀԲ-ն աջակցում է համայնքային ջրամատակարարման ծրագրին, ՋՌՀԿ ուսումնասիրության թարմացմանը, ինչպես նաև 2015թ.-ին նախատեսում է իրականացնել ջրի սակագնի ուսումնասիրություն: ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերը նպաստում են արձանագրության թիրախային I, II, III, IV, XI, XIV և XIX ոլորտների բարելավմանը:

Այսպիսով՝ Հայաստանի համար ընտրված բոլոր 9 առաջնային թիրախային ոլորտների համար առկա են դոնորների աջակցությանն արժանացած շարունակական և նախատեսված գործունեություններ, ինչը կնպաստի սահմանված թիրախային ոլորտներում գործողությունների ծրագրի և միջոցառումների իրականացման առաջընթացին, այն բանից հետո, երբ կառավարությունը պաշտոնապես կընդունի դրանք:

## **5. Ծանոթություն առաջարկվող գործողությունների ծրագրին**

Ստորև բերված աղյուսակն ապահովում է որոշակի օժանդակություն Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարումը, անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման մատչելիությունն ապահովելու գործողությունների ծրագրին: Այն հիմնված է «Ջուր և առողջություն» արձանագրության նախնական համաձայնեցված թիրախների, որոնք ներկայացված են սույն զեկույցի 2-րդ գլխում, և ջրի ազգային ծրագրի փուլային միջոցառումների ծրագրի վրա, որը վերլուծված է սույն զեկույցի 3-րդ գլխում:

Չնայած Հայաստանը դեռ չի վավերացրել ՄԱԿ ԵՏՀ-ի «Ջուր և առողջություն» արձանագրությունը, առաջարկվող գործողությունների ծրագիրը կօգնի Հայաստանին իրականացնել արձանագրության դրույթները՝ մինչև ժամանակ իրականացնելով ազգային օրենսդրության պահանջները և, մասնավորապես, միջոցառումները, որոնք ընդգրկված են Հայաստանի ջրի ազգային ծրագրում: Ազգային պահանջների հետ կապը ցույց տալու նպատակով՝ աղյուսակը ներառում է ջրի ազգային ծրագրի

համապատասխան հիմնախնդիրները յուրաքանչյուր թիրախային ոլորտի համար, որոնք հասցեագրված են համապատասխան կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներում:

Աղյուսակը ներառում է նաև թիրախների իրականացման ծախսերի խիստ մոտավոր գնահատական և սահմանում է հնարավոր ֆինանսավորման աղբյուրը՝ հաշվի առնելով համապատասխան թիրախային ոլորտներում դոնոր ծրագրերի վերլուծությունը, որը տրված է սույն զեկույցի 4-րդ գլխում: Հարկ է նշել, որ գնահատած մոտավոր բյուջեները միայն կողմնորոշիչ են և հատկապես խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի համար կպահանջվեն մանրակրկիտ նախնական տեխնիկատնտեսական գնահատականներ՝ անհրաժեշտ բյուջեի ավելի ճշգրիտ գնահատելու համար:

Աղյուսակ 3 - Առաջարկվող գործողությունների ծրագիրը Հայաստանում ջրի կայուն կառավարման, անվտանգ խմելու ջրի և պատշաճ ջրահեռացման մատչելիության ապահովման համար

Ոլորտ	Նպատակը	Առաջարկվող միջոցառումը	Ժամկետը	Կապը ՋԱԾ-ի հետ <sup>3</sup>	Պատասխանատու կազմակերպությունը	Բյուջեի սանդղակը <sup>4</sup>	Հնարավոր ֆինանսավորումը <sup>5</sup>
I	Մատակարարվող խմելու ջրի որակը	«Ջրի անվտանգության ծրագրի» մեթոդաբանության և համապատասխան իրավական դաշտի մշակում՝ էլնելով ԱՀԿ-ի մոտեցումներից	մինչև 2016թ.	Ջրի որակի ապահովման չափանիշների/նորմերի սահմանում և իրականացում	ԱՆ	1	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԱՄՆ ՄԶԳ, ՃԶԳ, ԶԳԲ, ՀԲ
				Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում			
				Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում			
II	Ջրի հետ կապված բռնկումների և հիվանդությունների կրճատում	Ջրով պայմանավորված հիվանդությունների դեպքերի կամ բռնկումների վերահսկման և արձագանքման համակարգի հզորացում՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1913-Ն որոշման համաձայն	մինչև 2015թ.	Ջրի որակի ապահովման չափանիշների/ նորմերի սահմանում և իրականացում	ԱՆ	1	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵԱՀԿ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
				Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում			
				Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում			
III	Խմելու ջրի մատչելիություն	Խմելու ջրի մատակարարման ծառայություն մատուցող ընկերություններ	մինչև 2015թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարե-	ՏԿՆ, ՋՄԸ-	2	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵՄ/ԵՀ,

<sup>3)</sup> Ջրի կառավարման յուրաքանչյուր առաջնային խնդրի համար ջրի ազգային ծրագրի փուլային միջոցառումների ծրագիրը ներառում է համապատասխան կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ:

<sup>4)</sup> Միջոցառումների շատ կոպիտ բյուջեն հաշվարկվում է հետևյալ սանդղակով 1- 50 000 ԱՄՆ դոլարից պակաս, 2 - 50 000 ԱՄՆ դոլարից մինչև 200,000 ԱՄՆ դոլար, 3 - 200,000 ԱՄՆ դոլարից մինչև 500,000 ԱՄՆ դոլար, 4 - 500,000 ԱՄՆ դոլարից մինչև 1 մլն ԱՄՆ դոլար, 5 - 1 մլն ԱՄՆ դոլարից ավել:

<sup>5)</sup> Ներառում է պետական բյուջեից հնարավոր ֆինանսավորումը կամ համատեղ իրականացում համապատասխան դաշտում ներգրավված դոնորների աջակցությամբ:

Ոլորտ	Նպատակը	Առաջարկվող միջոցառումը	Ժամկետը	Կապը ՋԱՄ-ի հետ <sup>3</sup>	Պատասխանատու կազմակերպությունը	Բյուջեի սանդղակը <sup>4</sup>	Հնարավոր ֆինանսավորումը <sup>5</sup>
		րի կողմից չսպասարկվող 560 գյուղական համայնքների ջրամատակարարման իրավիճակի գնահատում		լավում	ներ		ՏՀԶԿ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Խմելու ջրի մաքրման 5 կայանի վերականգնում	մինչև 2018թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ, ՋՄԸ-ներ	5	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Մակերևութային ջրերից անմիջապես օգտվող 5 բնակավայրում մաքրման կայանների կառուցում	մինչև 2020թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ, ՋՄԸ-ներ	5	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների ջրամատակարարման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	մինչև 2020թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ԿԳՆ, ՏԿՆ	2	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵՄ/ԵՀ, ՏՀԶԿ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
IV	Ջրահեռացման մատչելիություն	Երևանի «Ալեքսիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերակառուցում և արդիականացում	մինչև 2016թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ, Երևանի քաղաքապետարան	5	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ՏՀԶԿ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, Երևանի քաղաքապետարան
		Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում և ջրահեռացման ցանցերի բարելավում	մինչև 2016թ. <sup>6</sup> և մինչև 2020թ. <sup>7</sup>	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ, ՋՄԸ-ներ	5	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ՏՀԶԿ, ՄԱԶԾ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ազգային ռազմավարու-	մինչև 2015թ.	Ջրերի որակի կառավարման իրականացում	ՏԿՆ	2	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ՏՀԶԿ,

<sup>6</sup>) Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում

<sup>7</sup>) Լրացուցիչ 3 քաղաքում

Ոլորտ	Նպատակը	Առաջարկվող միջոցառումը	Ժամկետը	Կապը ՋԱԾ-ի հետ <sup>3</sup>	Պատասխանատու կազմակերպությունը	Բյուջեի սանդղակը <sup>4</sup>	Հնարավոր ֆինանսավորումը <sup>5</sup>
		թյան մշակում և հաստատում		Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում			ՄԱԶԾ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություն մատուցող մասնագիտական կազմակերպությունների կողմից չսպասարկվող 560 գյուղական համայնքների ջրահեռացման իրավիճակի գնահատում	մինչև 2015թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ	2	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ՏՀԶԿ, ՄԱԶԾ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Հանրակրթական ու նախադպրոցական հաստատությունների ջրահեռացման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում ու իրականացում	մինչև 2020թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ԿԳՆ, ՏԿՆ	2	Պետական բյուջե, ԱԶԲ, ՎԶԵԲ, ՏՀԶԿ, ՄԱԶԾ, ԱՄՆ ՄԶԳ, ՃԶԳ, ԶԳԲ, ՀԲ
XI	Կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի թափվող կեղտաջրերի որակը	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատանքների գնահատման չափորոշիչներում կեղտաջրերի մաքրման ցուցանիշների ներառում	մինչև 2016թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ	1	Պետական բյուջե, ՎԶԵԲ, ԵՄ/ԵՀ, ԶԳԲ, ՏՀԶԿ, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ
		Ջրի որակի գնահատման իրականացում՝ ըստ բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի ԹՄԱ չափանիշների	մինչև 2018թ. <sup>8</sup> և մինչև 2020թ. <sup>9</sup>	Ջրերի որակի կառավարման իրականացում	ԲՊՆ, ՏԿՆ	1	Պետական բյուջե, ՎԶԵԲ, ԵՄ/ԵՀ, ԶԳԲ, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ
		Արտանետվող կեղտաջրերի որակի մոնիթորինգի և գնահատման համա-	մինչև 2017թ.	Ջրերի որակի կառավարման իրականացում	ԲՊՆ, ՏԿՆ	3	Պետական բյուջե, ՎԶԵԲ, ԵՄ/ԵՀ, ԶԳԲ,

<sup>8</sup>) Մեկ պիլոտային ավագանում:

<sup>9</sup>) Եվս 2 պիլոտային ավագանում:

Ոլորտ	Նպատակը	Առաջարկվող միջոցառումը	Ժամկետը	Կապը ՋԱԾ-ի հետ <sup>3</sup>	Պատասխանատու կազմակերպությունը	Բյուջեի սանդղակը <sup>4</sup>	Հնարավոր ֆինանսավորումը <sup>5</sup>
		կարգի բարելավում					ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ
XIV	Խմելու ջրաղբյուր հանդիսացող ջրերի որակ	Խմելու ջրաղբյուրներից ստացվող խմելու ջրի մաքրման կառույցների կառուցում և վերակառուցում	մինչև 2020թ.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	ՏԿՆ, ՋՄԸ-ներ	4	Պետական բյուջե, ԱԶԲ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
		Ջրամատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքների խմելու աղբյուր հանդիսացող ջրերի որակի ապահովում՝ ազգային ստանդարտներին համապատասխան	մինչև 2018թ.	Ջրերի որակի կառավարման իրականացում	ՏԿՆ, ՋՄԸ-ներ	3	Պետական բյուջե, ԱԶԲ, ՃՄՀԳ, ԶԳԲ, ՀԲ
			Ջրի որակի ապահովման չափանիշների/ նորմերի սահմանում և իրականացում	Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում			
XVIII	Հատկապես աղտոտված տարածքների հայտնաբերում և մաքրում	Ջրային ռեսուրսների քանակական և որակական գնահատման համար մոնիթորինգային ցանցի օպտիմալացում	մինչև 2017թ.	Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակում	ԲՊՆ	3	Պետական բյուջե, ՎԶԵԲ, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՏՀԶԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ԶԳԲ
XIX	Ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետություն	Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում	մինչև 2016թ.	Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում	Կառավարություն	1	Պետական բյուջե, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ՀԲ
		ՁՊԿ տվյալների բազայի հզորացման նպատակով շահագրգիռ հաստատությունների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացի օրենսդրական հիմնավորում և մեխանիզմների ստեղծում	մինչև 2015թ.	Ջրային պետական կադաստրի վարման ինստիտուտի կատարելագործում	ԲՊՆ	1	Պետական բյուջե, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ
		Ջրավազանային կառավարման խորհուրդների գործունեության և իրավա-	մինչև 2018թ.	Ջրային ոլորտի կառավարման գործընթացում հասարակության իրա-	ԲՊՆ	1	Պետական բյուջե, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ,



Ոլորտ	Նպատակը	Առաջարկվող միջոցառումը	Ժամկետը	Կապը ՋԱԾ-ի հետ <sup>3</sup>	Պատասխանատու կազմակերպությունը	Բյուջեի սանդղակը <sup>4</sup>	Հնարավոր ֆինանսավորումը <sup>5</sup>
		սուբյուսների օրենսդրական հիմքի ստեղծում		գեկման և մասնակցության բարելավում			ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ
		Գործող ջրավազանային տարածքային կառավարման բաժինների կառավարման ֆունկցիաների և կարողությունների հզորացում	մինչև 2017թ.	Ջրավազանային կառավարման մարմինների զարգացում Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակում	ԲՊՆ	2	Պետական բյուջե, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ՀԲ
		ՀՀ ստորերկրյա ջրային ռեսուրսների հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ ու դրանց վերլուծություն, այդ ռեսուրսների դասակարգում՝ ըստ ջրի ազգային պաշարի և օգտագործելի ջրային ռեսուրսների	մինչև 2016թ. <sup>10</sup> և մինչև 2018թ. <sup>11</sup>	Ջրային ռեսուրսների և ջրային պաշարների բաղադրիչների գնահատում	ԲՊՆ, ԷԲՌՆ	3	Պետական բյուջե, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ՀԲ
		Ջրաէկոհամակարգերի բարելավման միջոցառումների ծրագրի մշակում	մինչև 2020թ.	Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում	ԲՊՆ	1	Պետական բյուջե, ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ՀԲ
		Ջրային տնտեսության կառավարման համակարգերի ռեգիստրի ստեղծում	մինչև 2018թ.	Ջրային պետական կադաստրի վարման ինստիտուտի կատարելագործում	ՏԿՆ	2	ԵՄ/ԵՀ, ԵԱՀԿ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԱՄՆ ՄԶԳ, ՀԲ
XX	Մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը	«Ջուր և առողջություն» արձանագրության ազգային հաշվետվության և խմելու ջրի որակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակումների հասանելիության ապահովում հասարակայնության համար	մինչև 2015թ.	Ջրային ոլորտի կառավարման գործընթացում հասարակության իրազեկման և մասնակցության բարելավում	ԲՊՆ, ՏԿՆ, ԱՆ	1	Պետական բյուջե, ԱՄՆ ՄԶԳ, ՃՄՀԳ, ԶԳԲ

<sup>10)</sup> Արարատյան դաշտի համար:

<sup>11)</sup> Ամբողջ երկրի համար:



## 6. Եզրակացություն

- Չնայած Հայաստանը դեռ չի վավերացրել ՄԱԿ ԵՏՀ-ի «Ջուր և առողջություն» արձանագրությունը, երկիրն ինտենսիվորեն աշխատում է քարտուղարության հետ և մասնակցում է հաշվետվությունների ներկայացման մեխանիզմին: «Աջակցություն ճանապարհային քարտեզին՝ Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման համար»՝ զեկույցը, որը պատրաստվել է ՄԱԿ-ի ԵՏՀ-FinWaterWei ծրագրի շրջանակում, ցույց է տալիս, որ Հայաստանը մեծապես կշահի արձանագրության վավերացումից, քանի որ արձանագրության սկզբունքների և մոտեցումների իրականացումը, որոնք լիովին համահունչ են Հայաստանի օրենսդրությանը, կբարձրացնի ազգային կարողությունները երկրի ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում, այդ թվում՝ ջրային էկոհամակարգերի պահպանության, ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, վերահսկման և նվազեցման ոլորտներում: Բացի այդ, արձանագրության վավերացումը կօգնի Հայաստանին իրականացնել բազմաթիվ դրույթներ, որոնք արդեն իսկ պահանջվում են երկրի ջրային օրենսդրությամբ և որտեղ առաջընթացը երբեմն ետ է մնում:
- Դառնալով արձանագրության կողմ՝ Հայաստանը պետք է պաշտոնապես ընդունի նպատակներ, նպատակային ժամկետներ և գործողությունների ծրագիր՝ այդ նպատակներին հասնելու համար: Սույն տեխնիկական զեկույցը և ներկայիս աջակցության ծրագրի այլ ներդրումները մեծապես կօգնեն այդ խնդրում: Նախ, այն կարող է օգնել Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարման, անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման մատչելիության ապահովման, իսկ ավելի ուշ, արձանագրության վավերացումից հետո, հիմք կապահովի արձանագրության համապատասխանության շարունակական մոնիթորինգի և գնահատման համար:
- Ինչպես երևում է զեկույցից, գործողությունների ծրագրում առաջարկվող բոլոր միջոցառումները սերտորեն կապված են տարբեր առաջնահերթ խնդիրների հետ, որոնք ներառված են ջրի ազգային ծրագրի փուլային միջոցառումների ծրագրում, և, միևնույն ժամանակ, շատ դոնորների կողմից ֆինանսավորվող նախագծեր արդեն աշխատում են և մտադիր են շարունակել աշխատանքները երկրի համար առաջնահերթ համարվող համապատասխան թիրախային ոլորտներում:

## Հղումներ

«Ելակետային իրավիճակի վերլուծություն և փորձագիտական գնահատում: Առաջին աշխատանքային նախագիծ», պատրաստված՝ ՄԱԿ ԵՏՀ-FinWaterWei ««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով» ծրագրի շրջանակում, 2014թ.:

Հարությունյան Լ., «Ջրի ազգային ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների փուլային ծրագրի իրականացման վերլուծությունը», 2012թ.:

ՀՀ բնապահպանության նախարարություն, «Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին», 2014թ. (մատչելի է <http://www.mnp.am/?p=201> կայքում):

ՀՀ բնապահպանության նախարարություն, ««Երկրորդ ամփոփ հաշվետվությունը՝ համաձայն «Ջուր և առողջություն» արձանագրության», 2013թ.:

««Նախնական սահմանված նպատակներն՝ ըստ Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության», պատրաստված՝ ՄԱԿ- ԵՏՀ-FinWaterWei ««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով» ծրագրի շրջանակում, 2014թ.:

Տոնոյան Վ., «Քաղաքականության ակնարկ: Հայաստանում ՋՌՀԿ բնագավառում ազգային քաղաքականության երկխոսության իրականացման արդյունքների և քաղած դասերի ամփոփում», 2010թ.:

Տոնոյան Վ., «Աջակցություն ՄԱԿ ԵՏՀ-ի «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման ճանապարհային քարտեզին, 2014թ.:

SHER Ingénieurs-Conseils sa, “Feasibility of the Master Plan for Integrated Water Resources Management in the Six Water Basin Management Areas of Armenia”, 2013.

United Nations Economic Commission for Europe/World Health Organization’s Regional Office for Europe, “Protocol on Water and Health to the 1992 Convention on the Protection and Use of Transboundary Watercourses and International Lakes”, 1999.